



ՀԱՐՑ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

||≡ Զ Ա Ն Ա Զ Ա Ն ≡||

Ա. Կ. — (Փարիզ). — Ածիլուած պահուն դէմքի կտրուածքներէն հոսող արիւնը կարելի է կասեցնել թիչ մը *eau oxygénée* կամ պաղլեղի (շապ) կտորով մը: — *Eau de Javel* կամ *cresyl* լեցուցէք այտաքնոցին մէջ. բայց քանի որ կը հոտի, կը նշանակէ թէ նորոգուսի պէտք ունի: — Ճանճերը փնացնելու համար նախ անհրաժեշտ է բացարձակ մաքրութիւն, այնպէս որ իրենց հաւկիթները տեղաւորելու տեղ չունենան, եւ իետիւարար չբազմանան: Իսկ ուղղակի փնացնելու համար շատ մը ճանճասպան դեղեր կան, օր. *formol*ով խառն կան, զոր տափակ պնակի մը մէջ դնելով, անկիւն մը կը զետեղէք: — Ցոյի կին մը կրնայ կար կարել, առաջին ամիսներուն՝ կրնայ լուացումներ ընել, կրնայ զանազան ցաւեր ունենալ: Ինչ ալ ըլլայ, յղի կին մը, առ ի զգուշութիւն, սլէտք է պարբերական բժշկական քննութեան ենթարկուի, մանաւանդ յղութեան վերջին ամիսներուն: — Կնոջ քով ներմակ հոսումը անքնական է. անշուշտ պէտք է մտահոգուիլ եւ բժիշկի մը կարծիքը հարցնել, գէթ ստուգելու համար պատճառը, որ կրնայ թեթեւ կամ ծանր ըլլալ: — Կղկղանքին մէջ արիւնի գոյութիւնը շատ մը պատճառներէ կ'առաջանայ (նութք, ստամոքսի եւ աղիքներու վէրք, կամ խլիք, եւայլն):

... — (Պաղտատ). — Ձեր տուած տեղեկութիւններէն կարելի չէ աննպաստ եղբակացութեան յանգիլ: Եթէ ֆիզիքապէս առողջ է, ինչպէս կը գրէք, եւ վարակիչ հիւանդութիւն մը չունի, պատճառ չկայ չամումնանալու: Եթէ կասկած մը ունիք, երկուստեք բժշկական քննութիւն մը անցուցէք ամուսնանալէ առաջ:

... — (Գահիքէ). — Կը ցաւինք որ առանձին նամակով չենք կրնար պատասխանել: — Քանի որ պատանին առողջ է, հոգ մի ընէք. բոլորս ալ մեր թոքերուն մէջ կրացած, (*calcifie*), սպիացած վէրքեր ունինք: Լաւ սնունդ, չափաւոր մարզանք. դպրոց կրնայ երթալ, բայց մի ստիպէք որ առաջինը ելլայ իր կարգին մէջ ...: Իւղը կրնաք տալ. անդրմանիշակագոյն նառագայթները օգտակար են, բայց ոչ ձեր կարծած կամ ձեզի ըսուած ձեւով: — Իրենց մանկութեան ընքացքին պատահմամբ, արկածով վարակուած (.) երկու եղբայրներուն հետեւած եւ հետեւելիք դարմանումին մասին դժուար է կարծիք մը յայտնել: Զարմանալի է որ «18 տարի անընդհատ դարմանումէ» յետոյ, տակաւին «մաքուր» չէ կրտսերին արիւնը: Կը թելադրենք *cyanure* կամ *réactivation* մը ընել տայէ յետոյ, անշուշտ իրենց բժիշկին ձեռքով, 15րդ եւ 21րդ օրը՝ տրիւնը եւ 21րդ օրը ողնազուրը քննել տաք վստահելի լապորաթուարի մը մէջ: Եթէ բոլոր քննութիւնները ժխտական արդիւնք տան, կարելի է դադրեցնել դարմանը, բայց ոչ բժշկական լ հսկողութիւնը (քննութիւն Յ ամիսը անգամ մը): Իսկ եթէ քննութիւնները դրական արդիւնք տան, պարագային համեմատ յարմար դարմանումը բժիշկը կ'որոշէ: Այսուհանդերձ կը կրկնենք որ լաւագոյն որոշումը զիրենք խնամող, հետեւարար հիւանդութեան պարագաներուն մօտէն ծանօթ բժիշկը կրնայ տալ: — Սխալ է ձեր տեղեկութիւնը. մալարիայի մանրէի ներարկումով կը դարմանեն, բաւական յաջող արդիւնքներով, *paralysie générale* (սիֆիլիսէ առաջ եկած տեսակ մը յիմարութիւն, որ ցարդ անքուժելի էր): — Կ'երեւի կ'ակնարկէք *vaccin antituberculeux de Friedmann*ին. ստացուած արդիւնքները խնդրական են: